

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության կառավարության և Լեհաստանի
Հանրապետության կառավարության միջև տնտեսական
համագործակցության և առևտրի վերաբերյալ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը և Լեհաստանի
Հանրապետության կառավարությունը, այսուհետ՝ Պայմանավորվող կողմեր,
ձգտելով ստեղծել նպաստավոր պայմաններ՝ հավասարության և
փոխշահավետության սկզբունքների հիման վրա տնտեսական
համագործակցության և առևտրական հարաբերությունների համաչափ
զարգացման համար, որոշեցին կնքել սույն Համաձայնագիրը և
պայմանավորվեցին հետևյալի մասին:

Հոդված 1

Պայմանավորվող կողմերը, յուրաքանչյուր երկրի օրենսդրության
համաձայն, կաջակցեն երկու երկրների միջև փոխադարձ տնտեսական և
առևտրական հարաբերությունների զարգացմանը:

Հոդված 2

Պայմանավորվող կողմերը իրենց երկրների ծագում ունեցող
ապրանքների արտահանման և ներմուծման համար միմյանց կընձեռեն
առավել բարենպաստ պայմաններ, քան կիրառվում է երրորդ երկրների
ապրանքների նկատմամբ:

Վերոհիշյալ կարգը չի տարածվում այն առավելությունների և
արտոնությունների վրա, որոնք երկու երկրները տրամադրում են կամ
կտրամադրեն՝

- ա) հարևան երկրների հետ սահմանամերձ առևտրին,
- բ) այն երկրների նկատմամբ, որոնք Հայաստանի Հանրապետության
և Լեհաստանի Հանրապետության հետ մասնակցում են մաքսային
միությանը, ազատ առևտրի գոտուն կամ տնտեսական
համագործակցության տարածաշրջանային ասոցիացիաներին, որոնք
արդեն ստեղծված են կամ կստեղծվեն ապագայում:

Հոդված 3

Պայմանավորվող կողմերը, իրենց իրավասության սահմաններում և
յուրաքանչյուր երկրի օրենսդրությանը համապատասխան, կաջակցեն
երկու երկրների համագործակցությանը ժողովրդական տնտեսության բոլոր

բնագավառներում, մասնավորապես՝ շինարարության, շինանյութերի, քիմիական, մետաղագործական արդյունաբերության, գյուղատնտեսության, գյուղմթերքների մշակման և պահպանման, առևտրի, ֆինանսական ոլորտի, բանկային գործի, զբոսաշրջության, առողջապահության մեջ:

Հոդված 4

Ժողովրդական տնտեսության բնագավառում համագործակցությունը կիրականացվի հետևյալ ուղիներով.

- առևտրական և տեխնիկական ներկայացուցիչների փոխանակում,
- համատեղ ձեռնարկությունների և խառը ընկերությունների ստեղծում,
- խորհրդատվական ծառայություններ,
- համատեղ հետազոտական աշխատանքների իրականացում,
- առևտրաարդյունաբերական ցուցահանդեսների և տոնավաճառների կազմակերպում,
- փոխադարձաբար հետաքրքրություն ներկայացնող համագործակցության այլ ձևեր:

Հոդված 5

Պայմանավորվող կողմերի միջև բոլոր հաշվարկները և վճարումները կիրականացվեն ազատ փոխարկելի արժույթով:

Պայմանավորվող կողմերի համապատասխան մարմինների միջև համաձայնության դեպքում հաշվարկները և վճարումները կարող են նաև իրականացվել յուրաքանչյուր երկրի օրենսդրությանը չհակասող այլ ձևով:

Հոդված 6

Ապրանքների և ծառայությունների առաքումները կիրականացվեն մի կողմից՝ Հայաստանի Հանրապետության արտաքին տնտեսական գործունեության մասնակիցների, մյուս կողմից՝ Լեհաստանի Հանրապետության տնտեսական սուբյեկտների, այսուհետ՝ Սուբյեկտներ, միջև կնքվող պայմանագրերի հիման վրա: Առաքվող ապրանքների և ծառայությունների գները, ինչպես նաև առաքման և հաշվարկների պայմանները կսահմանվեն պայմանագրերում:

Հոդված 7

Պայմանավորվող կողմերի համապատասխան մարմինները, իրենց երկրների օրենսդրությանը համապատասխան, փոխադարձության

սկզբունքների հիման վրա կաշակցեն Սուբյեկտներին՝ ստեղծելու ներկայացուցչություններ, տեխասպասարկման կայաններ և կետեր, որոնք կնպաստեն փոխադարձ առևտրի և ծառայությունների մատուցման զարգացմանը, ինչպես նաև արտաքին տնտեսական համագործակցության այլ հարցերի լուծմանը:

Հոդված 8

Պայմանավորվող կողմերը կստեղծեն հայ-լեհական համատեղ հանձնաժողով՝ սույն Համաձայնագրի կատարման ընթացքին հետևելու նպատակով:

Հանձնաժողովը կհավաքվի անհրաժեշտությունից ելնելով, առնվազն տարին մեկ անգամ՝ հաջորդաբար Հայաստանի Հանրապետությունում և Լեհաստանի Հանրապետությունում:

Հոդված 9

Պայմանավորվող կողմերի իրավասու մարմինները և կազմակերպությունները կանոնավոր կիրականացնեն Կողմերից յուրաքանչյուրի երկրում գործող՝ արտաքին տնտեսական բնագավառում իրավական կարգավորմանը վերաբերող տեղեկության փոխանակում:

Հոդված 10

Սույն Համաձայնագիրը չի հակասում Պայմանավորվող կողմերից յուրաքանչյուրի կողմից ստորագրված այլ միջազգային համաձայնագրերից, կոնվենցիաներից, պայմանագրերից և արձանագրություններից բխող պարտավորություններին:

Պայմանավորվող կողմերը միմյանց տեղյակ կպահեն իրենց կողմից ստորագրված բոլոր այն միջազգային փաստաթղթերի մասին, որոնք կարող են շոշափել մյուս Կողմի շահերը:

Հոդված 11

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Պայմանավորվող կողմերից յուրաքանչյուրի օրենսդրությանը համապատասխան, ինչը կհաստատվի հայտարարագրերի փոխանակման ճանապարհով: Սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելու օր է համարվում ավելի ուշ ստացված հայտարարագրի օրը:

Սույն Համաձայնագիրը կնքվում է անորոշ ժամկետով: Սույն Համաձայնագիրը կարող է լուծվել Պայմանավորվող կողմերից

յուրաքանչյուրի դիմումի համաձայն և կկորցնի իր ուժը լուծման վերաբերյալ հայտարարագրի ստացման օրվանից վեց ամիս հետո:

Համաձայնագիրը կարող է փոփոխվել Կողմերից յուրաքանչյուրի առաջարկությամբ՝ փոխադարձ համաձայնության դեպքում:

Սույն Համաձայնագրի ցանկացած փոփոխությունը կամ ուժը կորցնելը ուժի մեջ կլինի առանց վնաս հասցնելու Համաձայնագրից բխող կամ նրա հիման վրա մինչ այդ ընդունված իրավունքներին և պարտավորություններին:

Կատարված է Վարչավա քաղաքում 1992 թվականի փետրվարի 24-ին, երկու օրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն, լեհերեն և ռուսերեն, ընդ որում բոլոր տեքստերը ունեն միատեսակ ուժ:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 1993 թվականի սեպտեմբերի 19-ին: